## Բոլոր վտանգներին պատրաստ եք ESP-ի օգնությա՛մբ:



*Պատրա՞ստ եք արդյոք փրկվել խոշոր երկրաշարժի, ցունամիի, հրդեհի, հեղեղի, ահաբեկչական գործողության կամ այլ աղետի դեպքում:*

*Այս Արտակարգի իրավիճակի ժամանակ փրկվելու ծրագրի (ESP) բրոշյուրը ձեզ հեշտորեն հետևելու մի ցուցակ է տրամադրում, որպեսզի կարողանաք ձեզ պատրաստել՝ ըստ ձեր կարիքի: Հետևելով այս պարզ ցուցմունքներին, դուք կարող եք օգնել ձեր ընտանիքին, հարևանությանը, բիզնեսին կամ դպրոցին պատրաստվել հաջորդ աղետից հետո ավելի ինքնուրույն լինել:*

*Տարեկան ESP Կենտրոնացման թերթիկում՝ www.espfocus.org հասցեյով, անվճար տեղեկատվություն է տրամադրվում խորհուրդ տրվող ամսական գործողությունների վերաբերյալ: Կան նաև այլ հատուկ հրատարակություններ:*

*Մի թույլ տվեք, որ անպատրաստ վիճակում հայտնվեք հաջորդ ցնցման կամ աղետի ժամանակ: Միացեք ESP-ին և պատրաստ եղեք արտակարգ իրավիճակներին:*

*Այս տեղեկատվական էջը թողարկված է որպես Արտակարգ իրավիճակի ժամանակ փրկվելու ծրագրի (Emergency Survival Program) (ESP) մաս: ESP-ն հրազեկության արշավ է նախատեսված ուժեղացնելու համար տան, հարևանության, աշխատավայրի և դպրոցների արտակարգ իրավիճակի պատրաստվածությունը:*

## Պատրաստվածությունը վճռական է:

*ESP-ն մշակված է Լոս Անջելեսի վարչական շրջանի կողմից 1989 թվականին՝ համակարգված տասնհինգ վարչական շրջանների (Կոնտրա Կոստա, Իմպերիալ, Ինյո, Քերն, Լոս Անջելես, Մարին, Մոնո, Օրինջ, Ռիվերսայդ, Սան Բերնարդինո, Սան Դիեգո, Սան Լուիս Օբիսպո, Սանտա Բարբարա, Սանտա Կրուզ և Վենտուրա), Հարավային Կալիֆորնիա Էդիսոնի, Հարավային Կալիֆորնիայի երկրաշարժի կենտրոնի և Ամերիկյան Կարմիր խաչի կողմից:*

*Զանգահարեք Արտակարգ իրավիճակի ձեր տեղական Վարչական շրջանի գրասենյակ՝ պարզելու համար, թե ինչպես կարող եք մասնակցել այս կարևոր հասարակական տեղեկատվական արշավին կամ այցելեք՝ www.espfocus.org կայքէջը:*

Այս փաստաթղթի ֆինանսավորումը կատարվել է FEMA's Grants Programs Directorate (FEMA-ի դրամական նպաստների ծրագրի տնօրինության), U.S. Department of Homeland Security (Ամերիկայի Միացյալ Նահանգների Հայրենիքի Անվտանգության Բաժնի) կողմից՝ Կալիֆորնիայի Արտակարգ Իրավիճակների Ղեկավարման Գործակալության միջոցով: Այս փաստաթղթում նշված տեսակետները կամ կարծիքները պատկանում են դրա հեղինակներին և անհրաժեշտորեն չեն ներկայացնում FEMA's Grants Programs Directorate-ի կամ U.S. Department of Homeland Security-ի պաշտոնական դիրքորոշումը կամ ուղեգիծը:(UASI 2007 grant)

ARMENIAN

# ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ Ցուցակներ

## 10 էական կետ



Ձեր

- Արտակարգ իրավիճակի Ծրագիր
- Արտակարգ իրավիճակի Պաշարեղեն
- Տարհանում

*Հրատարակված է Լոս Անջելեսի Արտակարգ իրավիճակի վարչական շրջանի գրասենյակի կողմից*

**www.espfocus.org**

Rev: 10/10

## Արտակարգ իրավիճակի ծրագրի Ցուցակ

*10 ԷԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ*

1. ☐ Իմացեք ձեր տարածքի սպառնալիքները
2. ☐ Որոշեք հանդիպման վայրերը
   - Ձեր տնից դուրս
   - Ձեր մերձակայքից դուրս
3. ☐ Ընտրեք ձեր նահանգից դուրս կապին
4. ☐ Իմացեք ձեր տարհանման ուղիները
   - Ելքեր և երկընտրանքային ճանապարհներ տնից մեկնելու համար
5. ☐ Իմացեք կենցաղային սպասարկման անջատման տեղերը
   - Ջուր
   - Գազ
   - Էլեկտրականություն
6. ☐ Իմացեք դպրոցների, մանկապարտեզների և մեծահասակների խնամքի կենտրոնների օրենքները
   - Արտակարգ իրավիճակի ապաստարանները/պաշարեղենը
   - Տրանսպորտի միջոցները
7. ☐ Որոշեք յուրաքանչյուր սենյակի ապահով կետը՝ կարիքի դեպքում ծածկվելու համար
   - Ամուր սեղանների և գրասեղանների տակ
   - Ներքին պատերի մոտ
8. ☐ Լրացուցիչ դեղորայքներ
9. ☐ Հատուկ պայմաններ ստեղծեք՝
   - Երեխաների համար
   - Տարեցների համար
   - Տնային կենդանիների համար
   - Հաշմանդամություն ունեցող մարդկանց համար
   - Անգլերեն չխոսացողների համար
10. ☐ Ծրագրավորեք աղետի դեմ տարեկան մարզումներ

## Արտակարգ իրավիճակի պաշարեղեն Ցուցակ

*10 ԷԱԿԱՆ ՊԱՇԱՐԵՂԵՆ*

*Արտակարգ իրավիճակի պաշարեղենի պայուսակ*

1. ☐ Ջուր (երեք շաբաթվա պաշար՝ հիշեցեք տնային կենդանիներին)
2. ☐ Ուտելիք (չփչացող ուտելիքների երեք շաբաթվա պաշար և ոչ-էլեկտրական բացիչ՝ հիշեցեք տնային կենդանիներին)
3. ☐ Առաջին օգնության պայուսակ և գրքույկ
4. ☐ Լապտերիկներ (և ավելորդ մարտկոցներ)
5. ☐ Ռադիո (և ավելորդ մարտկոցներ)
6. ☐ Դեղորայքներ (առանց դեղատոմսի, դեղատոմսով և դեղատոմսերի ցուցակներ)
7. ☐ Կանխիկ փող և կարևոր փաստաթղթեր (փոքր թղթադրամեր և մետաղադրամեր, վավերագրեր, ապահովարության թղթեր, բժշկական քարտեր և այլն)
8. ☐ Հագուստ և ամուր կոշիկներ
9. ☐ Գործիքներ (պտուտակաբանալի, կրակմարիչ, ամուր ձեռնոցներ, սուլիչ)
10. ☐ Սանիտարական և հիգիենայի պաշարեղեն



*Տես՝ **www.espfocus.org** ավելի մանրամասն տեղեկությունների համար*

## Տարհանում Ցուցակ

*10 ԷԱԿԱՆ ԻՐ*

1. Արտակարգ իրավիճակի պաշարեղենի պայուսակ
2. Նահանգից դուրս կապերի ցուցակ
3. Կանխիկ փող և վարկային քարտեր
4. Կարևոր փաստաթղթեր
   - ☐ Սոցիալական ապահովության քարտ
   - ☐ Վարորդի իրավունք
   - ☐ Անձնագիր
   - ☐ Բժշկական քարտեր և գրանցումներ
   - ☐ Ապահովագրական տեղեկություն
5. Հագուստի փոխնորդ
   - ☐ Ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար
6. Անձնական հիգիենայի իրեր
   - ☐ Ատամի խոզանակ և մածուկ
   - ☐ Օճառահեղուկ և օճառ
   - ☐ Կրեմ
   - ☐ Դեզոդոր
   - ☐ Անձեռոցիկ և զուգարանի թուղթ
7. Ընտանեկան լուսանկարներ
8. Մանկան իրեր
   - ☐ Դայփերս
   - ☐ Կաթի փոշի
   - ☐ Կերակուր
   - ☐ Հագուստի փոխնորդ
9. Հատուկ կարիքների իրեր
   - ☐ Հաշմանդամի սայլակ, փայտիկներ և քայլակներ
   - ☐ Դեղորայքներ
   - ☐ Լսողական սարքեր (և ավելորդ մարտկոցներ)
10. Տնային կենդանիների խնամքի իրեր
   - ☐ Ինքնություն և պատվաստումներ
   - ☐ Բեռնակիր կամ վանդակ
   - ☐ Դնչակապ և շնակապ
   - ☐ Կերակուր և ջուր